ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի միջազգային իրավական համագործակցության վարչության պետ Քրիստիննե Գրիգորյանի՝ Իտալիայի Հանրապետություն (Վենետիկ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Արտակ Զեյնալյան և Քրիստիննե Գրիգորյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի միջազգային իրավական համագործակցության վարչության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Իտալիայի Հանրապետություն (Վենետիկ), 2018թ. հունիսի 21-23-ը:

Հրավիրող կողմը՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով):

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 115-րդ լիագումար նիստին:

Քննարկված թեմաները՝ ՀՀ-ում ս.թ. մայիս ամսին տեղի ունեցած թավշյա հեղափոխության արդյունքներով ձևավորված նոր կառավարության առաջնահերթությունները, ՀՀ նոր ընտրական օրենսգրքի բարեփոխումներին, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի հետ ապագա համագործակցության տեսլականին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը ելույթ ունենալով Վենետիկի հանձնաժողովի 115-րդ լիագումար նստաշրջանի ընթացքում նշել է, որ ՀՀ կառավարության առաջնային առաքելությունն է ժողովրդի՝ իշխանությունը ձևավորելու

իր անքակտելի սահմանադրական իրավունքը կյանքի կոչել՝ ապահովելով դրա համար անհրաժեշտ իրավական մեխանիզմները եւ դրան նպաստող հնարավոր բոլոր այլ պայմանները:

ՀՀ արդարադատության նախարարը հավելել է, որ իր այս առաքելության իրականացման նպատակով կառավարությունը մտադիր է նախաձեռնել ընտրական օրենսդրության բարեփոխումներ՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունները Սահմանադրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով: Կառավարության ծրագիրը հաստատվել է՝ մեկ տարվա ընթացքում արտահերթ ընտրություններ անցկացնելու անհրաժեշտության ամրագրմամբ:

Ամփոփելով ելույթը՝ ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը շեշտել է, որ ընտրական օրենսդրության փոփոխությունների փաթեթի մշակման ընթացքում հաշվի են առնվելու շահագրգիռ քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից բարձրացվող մտահոգությունները, դրանք մանրամասն քննարկվելու և հասցեագրվելու են օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակման ընթացքում, իսկ ՀՀ կառավարությունը երաշխավորելու է այդ աշխատանքների հնարավորինս ներառականությունը և թափանցիկությունը:

Իտալիայի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը հանդիպել է Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոյին: Հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարը շնորհակալություն է հայտնել կառավարության հետ Վենետիկի հանձնաժողովի արդյունավետ համագործակցության համար և վերահաստատել է Կառավարության պատրաստակամությունը էլ ավելի արդյունավետ համագործակցել Հանձնաժողովի հետ:

Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոյի հետ հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը ելույթից նշել է, որ կարևոր է՝ արտահերթ ընտրությունները կազմակերպվեն Վենետիկի հանձնաժողովի

սկզբունքներին համապատասխան՝ թափանցիկ և ներառական ձևով, քննարկելով շահագրգիռ կողմերի բոլոր առաջարկությունները՝ կոնսենսուսի հասնելու համար և որպեսզի կուսակցությունները Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո ունենան բավարար ժամանակ ընտրություններին մասնակցելու համար: